ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 447-Ա

«07» մայիսի 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՄԱՐՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 6.1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի փետրվարի 3-ի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Մարտին Պետրոսյանի կողմից ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու դեպքով նշանակված, «Ծառայողական քննություն նշանակելու մասին» N 75-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի մարտի 11-ի «Մարտին Պետրոսյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» N 230-Ա հրամանով կիրառված «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2025 թվականի մարտի 19-ի «Մարտին Պետրոսյանի բողոքը մերժելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի մարտի 11-ի «Մարտին Պետրոսյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» N 230-Ա հրամանն անփոփոխ թողնելու մասին» N 154-Ա որոշումը, ինչպես նաև

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի մարտի 19-ի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կողմից ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու դեպքով նշանակված, «Ծառայողական քննություն նշանակելու մասին» N 267-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 23-ի «Մարտին Պետրոսյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» N 396-Ա հրամանով կիրառված «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2025 թվականի մայիսի 6-ի «Մարտին Պետրոսյանի բողոքը մերժելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 23-ի «Մարտին Պետրոսյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» N 396-Ա հրամանն անփոփոխ թողնելու մասին» N 236-Ա որոշումը

հրամայում եմ՝

1. 2025 թվականի մայիսի 8-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /Ծածկագիր՝ 94-30.6-Ղ4-1/ Մարտին Պետրոսյանի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել հրամանից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2025-05-07 17:56:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Մ. ԳՅԱՐԶՈՅԱՆ
Ք. Գավառ